ԳԱՆԱՏԱՀԱՅՈՑ ԹԵՄ DIOCÈSE ARMÉNIEN DU CANADA

ԿԱՆԹԵՂ

ՍԲ. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՒՈՐԻՉ ԱՌԱՋՆՈՐԴԱՆԻՍ
ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑԻՈՅ ԿԻՐԱԿՆՕՐԵԱՅ ԹԵՐԹԻԿ

GANTEGH BULLETIN DU DIMANCHE DE LA CATHÉDRALE ARMÉNIENNE ST. GRÉGOIRE L'ILLUMINATEUR DE MOTRÉAL

Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՒՈՐԻՉ ՄԱՅՐ ՏԱՃԱՐ

ԿԻՐԱԿԻ 24 Մարտ 2019 | 103 | DIMANCHE, 24 Mars



ՏՆՏԵՍԻ ԿԻՐԱԿԻ

615 stgregorychurch@gmail.co Quebec, Canada H2V 3H2
secretary@saintgregory.ca | www.saintgregory.ca

ՏՆՏԵՍԻ ԿԻՐԱԿԻ
L'ECONOME
Աստուածաշունչի Ընթերցումներ

ԵՍԱՅԻԻ ՄԱՐԳԱՐԷՈՒԹԵՆԷՆ
56. 1- 57. 21
ՊՕՂՈՍ ԱՌԱՔԵԱԼԻ ԿՈՂՄԷ
ԵՓԵՍԱՑԻՆԵՐՈՒՆ ԳՐՈՒԱԾ ՆԱՄԱԿԷՆ
4. 17- 5. 14
ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ ԱՒԵՏԱՐԱՆԷՆ
ԸՍՏ ՂՈՒԿԱՍՈՒ
16. 1- 31

Les lectures de la Bible d'aujourd'hui :

Éphésiens (4.17-5.14)
Luc (16.1-31)

Պատարագիչ՝ Հոգեւոր Հովիւ
ԱՐԺ. Տ. ԴԱՒԻԹ ՔՀՆՅ. ՄԱՐԳԱՐԵԱՆ
Célébrant: Prêtre Paroissial
RÉV. PÈRE DAVID MARGARYAN

Առաւօտեան Ժամերգութիւն 9:30-ին
Office Matines à 9 :30
Ս. Պատարագ ժամը 10:30-ին
La Sainte Messe à 10:30
Հոգեհանգստեան Պաշտօն կէսօրին
Office de Requieme à Midi

Deacons - Acolytes

Choirmaster: Mr. Sarkis Barsemian
Organists: Mr. Karen Manucharyan
Mrs. Houri Bedrossian

ԿԻՐԱԿՆՕՐԵԱՅ ԸՆԹԵՐՑՈՒՄՆԵՐ

LES LECTURES DE DIMANCHE

THE SUNDAY READINGS

ՊՕՂՈՍ ԱՌԱՔԵԱԼԻ ԵՓԵՍԱՑԻՆԵՐՈՒՆ ԳՐԱԾ ՆԱՄԱԿԷՆ
4. 17- 5. 14

Ուստի կ՚ըսեմ ու Տէրոջմով կը վկայեմ, որ դուք անգամ մըն ալ այնպէս չքալէք, ինչպէս ուրիշ հեթանոսներ կը քալեն իրենց մըտքին ունայնութեանը մէջ. Որոնց իմացականութիւնը խաւարած է ու օտարացած են Աստուծոյ կեանքէն, իրենց մէջ եղած տգիտութեան պատճառով եւ իրենց սրտին կուրութեանը համար. Որոնք անզգայ ըլլալով՝ ինքզինքնին ագահութիւնով անառակութեան տուին, ամէն կերպ պղծութիւն գործելու։ Բայց դուք այսպէս չսորվեցաք Քրիստոսը, Թէեւ անոր վրայով լսեցիք եւ անկէ սորվեցաք, թէ ճշմարտութիւնը Յիսուսին մէջ է, Որպէս զի ձեր վրայէն հանէք այն ձեր առաջուան վարմունքը ունեցող հին մարդը, որ խաբեբայ ցանկութիւններով ապականուած էր Եւ ձեր մտքով ու հոգիով նորոգուիք Եւ նոր մարդը ձեր վրայ հագնիք, որ Աստուծոյ պատկերին պէս արդարութիւնով ու ճշմարիտ սրբութիւնով ստեղծուած է։ Ուստի ստութիւնը մէկդի ձգելով՝ ճշմարտութիւնը խօսեցէք ամէն մէկդ իր ընկերին, վասն զի մենք իրարու անդամներ ենք։ Եթէ բարկանաք՝ մեղք մի՛ գործէք, արեւը ձեր բարկութեանը վրայ մարը թող չմտնէ։ Ու Սատանային՝ տեղի մի՛ տաք։ Ան որ գողութիւն կ՚ընէր, ա՛լ թող չգողնայ. այլ մանաւանդ աղէկ գործի մը պարապելով՝ իր ձեռքերովը աշխատի, որպէս զի կարող ըլլայ տալ կարօտ եղողին։ Բնաւ ձեր բերնէն ապականեալ խօսք մը թող չելլէ, հապա ինչ որ աղէկ է՝ պէտք եղած շինութեանը համար, որպէս զի լսողներուն շնորհք տայ։ Եւ Աստուծոյ Սուրբ Հոգին մի՛ տրտմեցնէք, որով դուք կնքուեցաք փրկութեան օրուանը համար։ Ամէն դառնութիւն եւ բարկութիւն ու սրտմտութիւն եւ աղաղակ ու հայհոյութիւն վերցուի ձեզմէ իրենց չարութիւններով մէկտեղ։ Եւ իրարու հետ քաղցր եղէք, գթած, ներելով իրարու, ինչպէս Աստուած Քրիստոսով ներեց ձեզի։

Արդ՝ Աստուծոյ նմանող եղէք սիրելի զաւակներու պէս, Եւ սիրով վարուեցէք, ինչպէս Քրիստոս ալ մեզ սիրեց ու իր անձը

մեզի համար մատնեց՝ անուշահոտ պատարագ ու զոհ ըլլալով Աստուծոյ։ Բայց պոռնկութեան եւ ամէն կերպ պղծութեան կամ ագահութեան անունը անգամ պէտք չէ յիշուի ձեր մէջ, ինչպէս կը վայլէ սուրբերուն, Եւ գարշելի բաներ կամ յիմարական խօսքեր կամ խեղկատակութիւն, որ չի վայլեր, այլ մանաւանդ՝ գոհութիւն։ Քանզի գիտէք, թէ ամէն պոռնիկ կամ պիղծ կամ ագահ, որ կռապաշտ է, Քրիստոսին ու Աստուծոյ թագաւորութեանը մէջ ժառանգութիւն չունի։ Չըլլա՛յ որ մէկը ձեզ խաբէ փուճ խօսքերով, վասն զի այս բաներուն համար Աստուծոյ բարկութիւնը կու գայ անհնազանդութեան որդիներուն վրայ։ Ուստի անոնց հաղորդ մի՛ ըլլաք։ Քանզի թէեւ ատեն մը դուք խաւար էիք, բայց հիմա լոյս էք Տէրոջմով. ուստի լոյսի որդիներու պէս քալեցէք. Վասն զի Հոգիին պտուղը ամէն կերպ բարութիւնով, արդարութիւնով ու ճշմարտութիւնով է։ Քննեցէք թէ ի՛նչ է Տէրոջը հաճելին. Ու կցորդ մի՛ ըլլաք խաւարին անպտուղ գործերուն, այլ մանաւանդ զանոնք յանդիմանեցէ՛ք։ Վասն զի անոնց մէջ գաղտուկ գործուած բաներու մասին խօսիլն ալ ամօթ է։ Բայց երբ բան մը լոյսի մէջ ցուցադրուած է՝ յայտնի կ՚ըլլայ վասն զի ամէն բան որ յայտնի կ՚ըլլայ՝ լոյս է։Անոր համար կ՚ըսէ. «Արթնցի՛ր, դուն որ կը քնանաս եւ կանգնէ՛ մեռելներէն ու Քրիստոս քեզի լո՛յս պիտի տայ»։

ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ ԱՒԵՏԱՐԱՆԷՆ ԸՍՏ ՂՈՒԿԱՍՈՒ 16. 1- 31

Իր աշակերտներուն ալ ըսաւ. «Հարուստ մարդ մը կար, որ տընտես մը ունէր։ Անոր վրայ զանգատ եղաւ իրեն՝ որպէս թէ իր ունեցածը կը փճացնէ։ Ուստի կանչեց զանիկա ու ըսաւ անոր. ‘Ի՞նչ է այս որ քեզի համար կը լսեմ։ Քու տնտեսութեանդ հաշիւը տուր, վասն զի ա՛լ չես կրնար տնտես ըլլալ’։ Տնտեսը իր մտքին մէջ ըսաւ. ‘Ի՞նչ ընեմ, որովհետեւ իմ տէրս տնտեսութիւնը ինձմէ կ՚առնէ. Հողագործութիւն չեմ կրնար ընել, մուրալու կ՚ամչնամ։Գիտեմ ի՛նչ պիտի ընեմ, որպէս զի երբ իմ տնտեսութենէս հանուիմ, զիս իրենց տունը ընդունին’։ Իր տիրոջը պարտականները մէկիկ մէկիկ իրեն կանչելով՝ ըսաւ առաջինին. ‘Դուն իմ տիրոջս ո՞րչափ պարտք ունիս’։ Ան ալ ըսաւ. ‘Հարիւր մար ձէթ’։ Ըսաւ անոր. ‘Գիրդդ առ ու շուտով նստէ յիսուն գրէ’։ Ետքը միւսին ըսաւ. ‘Դո՞ւն որչափ պարտք ունիս’։ Անիկա ըսաւ. ‘Հարիւր քոռ ցորեն’։ Ըսաւ անոր. ‘Գիրդ առ եւ ութսուն գրէ’։ Տէրը անիրաւ տնտեսը գովեց, որ

խելացութիւնով ըրաւ. վասն զի այս աշխարհին որդիները ի-րենց ցեղին մէջ՝ լուսոյ որդիներէն աւելի խելացի են։ Ես ալ ձեզի կ՚ըսեմ. ‘Անիրաւ մամոնայէն ձեզի բարեկամներ ըրէք, որպէս զի երբ անիկա պակսի ձեզ յաւիտենական բնակարաններու մէջ ընդունին’։ Ան որ քիչ բանի մէջ հաւատարիմ է, շատի մէջ ալ հաւատարիմ կ՚ըլլայ եւ ան որ քիչի մէջ անիրաւ է, շատի մէջ ալ անիրաւ կ՚ըլլայ։ Ուստի եթէ անիրաւ մամոնային մէջ հաւատարիմ չըլլաք, ճշմարիտ հարստութիւնը ո՞վ պիտի հաւատայ ձեզի։ Եթէ օտարին բանին մէջ հաւատարիմ չըլլաք, ձերը ո՞վ պիտի տայ ձեզի։ Ծառայ մը չի կրնար երկու տէրերու ծառայութիւն ընել, վասն զի կա՛մ մէկը պիտի ատէ եւ միւսը սիրէ, կա՛մ մէկուն պիտի յարի եւ միւսը արհամարհէ։ Չէք կրնար ծառայել Աստուծոյ ու մամոնային»։

Փարիսեցիներն ալ, որոնք արծաթասէր էին, այս ամէնը լսելով կը քամահրէին զանիկա։ Յիսուս ըսաւ անոնց. «Դուք էք որ մարդոց առջեւ ինքզինքնիդ կ՚արդարացնէք, բայց Աստուած գիտէ ձեր սրտերը. վասն զի մարդոց մէջ բարձր եղածը Աստուծոյ առջեւ պիղծ է։ Օրէնքը ու մարգարէները մինչեւ Յովհաննէս էին. անկէ յետոյ Աստուծոյ թագաւորութիւնը կը քարոզուի եւ ամէն մէկը ա-նոր մէջ մտնելու կ՚արտորայ։ Աւելի դիւրին է, որ երկինք ու եր-կիր անցնին, քան թէ օրէնքէն մէկ նշանագիր իյնայ։ Ով որ իր կի-նը արձակէ եւ ուրիշ մը առնէ, շնութիւն կ՚ընէ եւ ով որ էրիկէն արձակուած կին մը առնէ, շնութիւն կ՚ընէ»։

«Հարուստ մարդ մը կար, որ ծիրանի ու բեհեզ կը հագնէր եւ ամէն օր փառաւորապէս ուրախութիւն կ՚ընէր։ Ղազարոս անունով աղքատ մըն ալ կար վէրքերով լեցուն, որ անոր դրանը առջեւ դրուած էր։ Ան կը փափաքէր հարուստին սեղանէն ինկած փըշրանքներէն իր փորը լեցնել։ Շուները կու գային եւ անոր վէրքերը կը լզէին։ Աղքատը մեռաւ ու հրեշտակները Աբրահամի գոգը տարին զանիկա։ Հարուստն ալ մեռաւ ու թաղուեցաւ։ Երբ դժոխքը՝ տանջանքի մէջ էր հարուստը՝ իր աչքերը վերցնելով հեռուէն տեսաւ Աբրահամը ու Ղազարոսը անոր գոգը հանգիստ նստած։ Այն ատեն աղաղակեց ու ըսաւ. ‘Հա՛յր Աբրահամ, ողորմէ ինծի ու ղրկէ Ղազարոսը, որպէս զի իր մատին ծայրը ջուրը թաթխէ ու զովացնէ իմ լեզուս, վասն զի այս բոցին մէջ կը տանջուիմ’։ Աբրահամ ըսաւ. ‘Ո՛րդեակ, միտքդ բեր, որ դուն քու կեանքիդ մէջ քու բարիքներդ առիր, նոյնպէս Ղազարոս՝ չարիքներ. հիմա ա-նիկա

հոս կը մխիթարուի ու դուն կը տանջուիս։ Այս ամէն բաներէն զատ՝ մեր ու ձեր մէջտեղ մեծ անդունդ մը կայ հաստատուած, որպէս զի ձեզի անցնիլ ուզողները չկրնան, ոչ ալ ատկէ մեզի գալ ուզողները՝ անցնին’։ Ան ալ ըսաւ. ‘Ուրեմն կ’աղաչեմ քեզի, հա՛յր, որ զանիկա իմ հօրս տունը ղրկես, Քանզի հինգ եղբայր ունիմ, որպէս զի երթայ անոնց վկայութիւն տայ, որ չըլլայ թէ անոնք ալ այս չարչարանքին տեղը գան’։ Աբրահամ ըսաւ անոր. ‘Անոնք Մովսէսն ու մարգարէները ունին, թող անոնց մտիկ ընեն’։ Ան ալ ըսաւ. ‘Ո՛չ, հա՛յր Աբրահամ, հապա եթէ մեռելներէն մէկը անոնց երթայ, պիտի ապաշխարեն’։ Աբրահամ ըսաւ անոր. ‘Եթէ Մովսէսին ու մարգարէներուն մտիկ չեն ըներ, ուրեմն մեռելներէն մէկը յարութիւն առնելու ալ ըլլայ, պիտի չհամոզուին’»։

ÉPHESIENS
4.17-5.14

Je vous dis donc, et je vous conjure de la part du Seigneur, de ne vous conduire plus comme le reste des Gentils, qui suivent la vanité de leurs pensées; Ayant leur entendement obscurci de ténèbres, et étant éloignés de la vie de Dieu, à cause de l'ignorance qui est en eux par l'endurcissement de leur cœur. Lesquels ayant perdu tout sentiment, se sont abandonnés à la dissolution, pour commettre toute souillure, à qui en ferait pis. Mais vous n'avez pas ainsi appris Christ; Si toutefois vous l'avez écouté, et si vous avez été enseignés par lui, selon que la vérité est en Jésus; [Savoir] que vous dépouilliez le vieil homme, quant à la conversation précédente, lequel se corrompt par les convoitises qui séduisent; Et que vous soyez renouvelés dans l'esprit de votre entendement. Et que vous soyez revêtus du nouvel homme, créé selon Dieu en justice et en vraie sainteté.

C'est pourquoi ayant dépouillé le mensonge, parlez en vérité chacun avec son prochain; car nous sommes les membres les uns des autres. Si vous vous mettez en colère, ne péchez point. Que le soleil ne se couche point sur votre colère. Et ne donnez point lieu au Démon [de vous perdre]. Que celui qui dérobait, ne dérobe plus ; mais que plutôt il travaille en faisant de ses mains ce qui est bon; afin qu'il ait de quoi donner à celui qui en a besoin. Qu'aucun discours malhonnête ne sorte de votre bouche, mais [seulement] celui qui est propre à édifier, afin qu'il soit agréable à ceux qui l'écoutent. Et n'attristez point le Saint-Esprit de Dieu, par lequel vous avez été scellés pour le jour de la Rédemption. Que toute amertume, colère, irritation, crierie, et médisance, soient ôtées du milieu de vous, avec toute malice.

Soyez donc les imitateurs de Dieu, comme [ses] chers enfants; Et marchez dans la charité, ainsi que Christ aussi nous a aimés, et s'est donné lui-même pour nous en oblation et sacrifice à Dieu, en odeur de bonne senteur.

Que ni la fornication, ni aucune souillure, ni l'avarice, ne soient pas même nommées parmi vous, ainsi qu'il est convenable à des Saints; Ni aucune chose déshonnête, ni parole folle, ni plaisanterie; car ce sont là des choses qui ne sont pas bienséantes; mais plutôt des actions de grâces. Car vous savez ceci, que nul fornicateur, ni impur, ni avare, qui est un idolâtre, n'a point d'héritage dans le Royaume de Christ, et de Dieu. Que personne ne vous séduise par de vains discours, car à cause de ces choses la colère de Dieu vient sur les rebelles. Ne soyez donc point leurs associés. Car vous étiez autrefois ténèbres, mais maintenant vous êtes lumière au Seigneur; conduisez-vous [donc] comme des enfants de lumière. Car le fruit de l'Esprit consiste en toute débonnaireté, justice et vérité. Eprouvant ce qui est agréable au Seigneur. Et ne communiquez point aux œuvres infructueuses des ténèbres, mais au contraire reprenez-les. Car il est même déshonnête de dire les choses qu'ils font en secret. Mais toutes choses étant mises en évidence par la lumière, sont rendues manifestes ; car la lumière est celle qui manifeste tout. C'est pourquoi il [est] dit : Réveille-toi, toi qui dors, et te relève d'entre les morts, et Christ t'éclairera.

Luc
(16.1-31)

Il disait aussi à ses Disciples : Il y avait un homme riche qui avait un économe, lequel fut accusé devant lui comme dissipateur de ses biens. Sur quoi l'ayant appelé, il lui dit : qu'est-ce que j'entends dire de toi? Rends compte de ton administration; car tu n'auras plus le pouvoir d'administrer mes biens. Alors l'économe dit en lui-même : que ferai-je, puisque mon maître m'ôte l'administration? je ne puis pas fouir la terre, et j'ai honte de mendier. Je sais ce que je ferai, afin que quand mon administration me sera ôtée, [quelques-uns] me reçoivent dans leurs maisons. Alors il appela chacun des débiteurs de son maître, et il dit au premier : combien dois-tu à mon maître? Il dit : cent mesures d'huile. Et il lui dit : prends ton obligation, et t'assieds sur-le-champ, et n'en écris que cinquante. Puis il dit à un autre : et toi combien dois-tu? et il dit : cent mesures de froment. Et il lui dit : prends ton obligation, et n'en écris que quatre-vingts. Et le maître loua l'économe infidèle de ce qu'il avait agi prudemment. Ainsi les enfants de ce siècle sont plus prudents en leur génération, que les enfants de lumière. Et moi aussi je vous dis : faites-vous des amis des richesses iniques; afin que quand vous viendrez à manquer, ils vous reçoivent dans les Tabernacles éternels.

Celui qui est fidèle en très peu de chose, est fidèle aussi dans les grandes choses; et celui qui est injuste en très peu de chose, est injuste aussi dans les grandes choses. Si donc vous n'avez pas été fidèles dans les richesses iniques, qui vous confiera les vraies [richesses]? Et si en ce qui est à autrui vous n'avez pas été fidèles, qui vous donnera ce qui est vôtre? Nul serviteur ne peut servir deux maîtres; car ou il haïra l'un, et aimera l'autre; ou il s'attachera à l'un, et méprisera l'autre. Vous ne pouvez servir Dieu et les richesses.

Or les Pharisiens aussi, qui étaient avares, entendaient toutes ces choses, et ils se moquaient de lui. Et il leur dit : vous vous justifiez vous-mêmes devant les hommes; mais Dieu connaît vos cœurs; c'est pourquoi ce qui est grand devant les hommes, est en abomination devant Dieu.

La Loi et les Prophètes [ont duré] jusqu'à Jean; depuis ce temps-là le Règne de Dieu est évangélisé, et chacun le force. Or il est plus aisé que le ciel et la terre passent, que non pas qu'il tombe un seul point de la Loi.

Quiconque répudie sa femme, et se marie à une autre, commet un adultère, et quiconque prend celle qui a été répudiée par son mari, commet un adultère.

Or il y avait un homme riche, qui se vêtait de pourpre et de fin lin, et qui tous les jours se traitait splendidement. Il y avait [aussi] un pauvre, nommé Lazare, couché à la porte du [riche], et tout couvert d'ulcères; Et qui désirait d'être rassasié des miettes qui tombaient de la table du riche; et même les chiens venaient, et lui léchaient ses ulcères. Et il arriva que le pauvre mourut, et il fut porté par les Anges au sein d'Abraham; le riche mourut aussi, et fut enseveli. Et étant en enfer, et élevant ses yeux, comme il était dans les tourments, il vit de loin Abraham et Lazare dans son sein. Et s'écriant, il dit : Père Abraham aie pitié de moi, et envoie Lazare, qui mouillant dans l'eau le bout de son doigt, vienne rafraîchir ma langue; car je suis grièvement tourmenté dans cette flamme. Et Abraham répondit : mon fils, souviens-toi que tu as reçu tes biens en ta vie, et que Lazare y a eu ses maux; mais il est maintenant consolé, et tu es grièvement tourmenté. Et outre tout cela, il y a un grand abîme entre nous et vous; tellement que ceux qui veulent passer d'ici vers vous, ne le peuvent; ni de là, passer ici. Et il dit : je te prie donc, père, de l'envoyer en la maison de mon père; Car j'ai cinq frères, afin qu'il leur rende témoignage [de l'état où je suis]; de peur qu'eux aussi ne viennent dans ce lieu de tourment. Abraham lui répondit : Ils ont Moïse et les Prophètes; qu'ils les écoutent. Mais il dit : Non, père Abraham, mais si quelqu'un des morts va vers eux, ils se repentiront. Et Abraham lui dit : s'ils n'écoutent point Moïse et les Prophètes, ils ne seront pas non plus persuadés, quand quelqu'un des morts ressusciterait.

Եկեղեցական Օնաացոյց Յառաջիկայ Շաբթուան

Մարտ – Mars

25, Երկուշաբթի – ԻԲ. Օր Մեծի Պահոց
Lundi 25 – 22ème jour du Jeûne du Carême

26, Երեքշաբթի – ԻԳ. Օր Մեծի Պահոց
Mardi 26 - 23ème jour du Jeûne du Carême

27, Չորեքշաբթի – ԻԴ. Օր Մեծի Պահոց
Միջինք
Mercredi 27 - 24ème jour du Jeûne du Carême
Mi- Carême

28, Հինգշաբթի – ԻԵ. Օր Մեծի Պահոց
Jeudi 28 – 25ème jour du Jeûne du Carême

29, Ուրբաթ - ԻԶ. Օր Մեծի Պահոց
Vendredi 29 - 26ème jour du Jeûne du Carême

30, Շաբաթ – ԻԷ. Օր Մեծի Պահոց
Տօն Սրբոց Մանկանցն Քառասնից, որք ի Սեբաստիա կատարեցան:
Samedi 30 – 27ème jour du Jeûne du Carême
Fête des Saints Quarante Enfants qui accomplirent leur destin de martyr à Sébaste.

ՇԱԲԹՈՒԱՆ ԽՈՐՀՐԴԱԾՈՒԹԻՒՆ

«Եթէ մարդը իր մեղքերը չի տեսներ, չի նշանակեր, որ մեղք չունի: Այդ կը նշանակէ թէ՛ մարդը ո՛չ միայն մեղքերու մէջ է, այլ նաեւ՝ հոգեւոր կուրութեան մէջ է»:

Հայր Նիքոն Վորոպեով

«Խոնարհամտութեան կը հասնին պահքով, աղօթքով եւ յատկապէս հնազանդութեամբ»:

Թաթէոս վրդ. Վիդովնիցքի

Հոգեւոր Հովիւի

Սիրելի հաւատացեալներ,

Հայաստանեայց Առաքելական Սուրբ Եկեղեցւոյ աւանդութեամբ այսօր Մեծ Պահոց չորրորդ Կիրակին կը յիշատակենք։

Ըստ տօնացոյցի՝ Անիրաւ Տնտեսի, իսկ այլ եկեղեցիներու աւանդութեամբ՝ Իմաստուն Տնտեսի։ Երկուքն ալ ճշմարիտ պայմանաւորուած են, թէ ինչ տեսանկիւնով կը դիտենք…բայց խօսքս այս մասին չէ…

Տնտեսի առակին առանցքը հաշուետուութիւնն է՝ համարատուութիւնը։ Այս մարդու Աստուածադիր բնական զգացումն է, որ ուղղակիօրէն կ՚առնչուի մարդու արարումին պատմութեան եւ անոր ընտրութեան Աստուածապարգեւ շնորհին հետ։ Մենք ընտրութիւն կը կատարենք եւ այդ ընտրութեան համար պատասխանատու կ՚ըլլանք հաշուետուութեամբ։ Երբ առաջին մարդը իր ազատ կամքովը ընտրեց մեղքը Աստուած փութաց փրկել “Ո՞ւր ես Ադամ” հարցադրումով՝ պատրաստելով անոր ապաշխարութեան, իսկ այս պարագային չզղջացող մարդուն ուղղակի դարձեալ ընտրութեան առջեւ դրաւ շեշտելով “Տուր քու տնտեսութեանդ հաշիւը”։ Մեղքն ընդունելու ժխտողականութիւնը համամարդկային երեւոյթ մըն է՝ Ադամէն սկզբնաւորուած եւ ցաւալիօրէն ոչ միայն ժխտողականութիւնը, այլեւ զայն արդարացնելու բազմապիսի հնարները՝ արդարացման կամ ինքնարդարացման զանազան պատճառներով վարագուրուած։

Մեր օրերուն կարծես Աստուածային նախախնամութեամբ մեծ պահքի ապաշխարութեան, զղջումի, խոկումի, աղօթքի, անդրադարձումի ընթացքը համապատասխանած է, աւելին՝ յաջորդած է շատ կարեւոր իրադարձութեան՝ մեր մայր հայրենիքին մէջ տեղի ունեցող ընտրական գործընթացներուն հետ։ Երկուքին մէկտեղումը միեւնոյն ժամանակահատուածին մէջ հանրային կեանքի լաւագոյն ներկայացուցիչն է։

Փոփոխութեան մասին ճառերէն, լուտանքներէն, հայհոյանքներէն, կաշառատուութեան մասին զրոյցներէն, լուսաւոր ու բարգաւաճ, ապահով ու գեղատեսիլ ապագայի խոստումներէն, թեկնածուներու պատկերներու ամենուրեքութենէն ու ֆիզիքական շփումին հասանելիութենէն անդին կ՚ուզեմ լսել ապաշխարութեան ու զղջումին իրական խոստովանութիւնները: Առանց՛ ապաշխարութեան չի՛ կրնար ըլլալ ո՛չ մէկ փոփոխութիւն: Ապաշխարութիւնն է փոփոխութիւնը եւ դեռ աւելին՝ ԵՐՋԱՆԻԿ ՓՈՓՈԽՈՒԹԻՒՆԸ:

Ապաշխարութեան քաջութիւնը Յարութեան Յաղթանակի գրաւականն է..

ԱՊԱՇԽԱՐՈՒԹԻ՛ՒՆ, այս է բանալին ՀԱՇՈՒԵՏՈՒՈՒԹԵԱՆ…

Օրհնութեամբ՝ Տէր Դաւիթ քահանայ Մարգարեան

Résume du Sermon

L'Église Arménienne Apostolique célèbre aujourd'hui le quatrième Dimanche du Carême, intitule Dimanche de l'intendant infidèle.

Dans la parabole de Jésus, l'homme riche représente Dieu et l'intendant c'est nous, les disciples de Jésus et le pivot de la parabole est la reddition des comptes.

La vie que nous avons est un don de Dieu, avec la liberté qui lui est attachée.

Adam a choisi le péché et Dieu est intervenu en lui proposant la pénitence et dans la parabole en question le maitre demande un compte - rendu.

Reconnaitre ses péchés et en outre les justifier est dans la nature de l'homme.

Cette période de Carême avec la pénitence, le repentir et le recueillement coïncide providentiellement avec les péripéties politiques, sociales et économiques dans notre Mère Patrie.

En scrutant les discours des politiciens sur la corruption et l'injustice, suivis des promesses d'une meilleure gouvernance, nous espérons entendre des aveux sincères se rapportant à la pénitence et à la repentance sans lesquelles il ne peut y avoir changement, notamment un changement juste et enchanteur.

En Foi et en Prière

Père David Margaryan

ՇԱԲԹՈՒԱՆ ԱՂՕԹՔԸ

ԱՂՕԹՔ
ՕՐԸ ԱՆՎՏԱՆԳ ԱՆՑԸՆԵԼՈՒ

Գիշեր ու ցերեկ եւ ամէն ժամ կ'աղաչենք քեզի եւ կը խնդրենք, մարդասէ՛ր Տէր: Լսէ՛ մեզ, ո՛վ Աստուած, մեր Փրկիչը. ականջդ մեզի խոնարհեցուր, որպէսզի զուր տեղ չյոգնինք. այլ՝ մեր ճիգը արդարութեան գործ եւ աստուածապաշտութեան պտուղ նկատէ:

Ընդունէ՛ մեր աղօթքն ու երկրպագութիւնը, ո՛վ Տէր, եւ քու ողորմութեամբդ հատուցանէ մեզի, առատապէս: Քու ամենազօր աջիդ հովանիին տակ ծածկէ մեզ, եւ Սուրբ Հոգիիդ զօրութեամբը զօրացուր մեզ, ո՛վ Տէր: Աչքի բիբի պէս պահէ մեզ, եւ քու բարութիւնդ ցոյց տուր մեզի, որպէսզի քու սուրբ անունդ զովուի եւ փառաբանուի: Որովհետեւ բոլոր արարածները մշտնջենաւոր փառափանութեամբ քու փառքդ կը հիւսեն բարձունքներուն մէջ, Հայր եւ Որդի եւ Սուրբ Հոգի, այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. Ամէն:

APPEL A LA PROTECTION QUOTIDIENNE

De jour et de nuit, à toute heure, nous te prions et te supplions, Seigneur qui aime les hommes, écoute-nous, Dieu notre Sauveur, incline ton oreille vers nos demandes, pour que le labeur de tes serviteurs ne soit pas vain, mais considère notre travail comme œuvre de justice et comme acte de piété. Accepte, Seigneur, notre prière et notre adoration, et dans ta miséricorde récompense-nous abondamment. Couvre-nous de la protection de ta droite toute-puissante, fortifie-nous, Seigneur, de la force de ton Esprit Saint. Sauve-nous comme la prunelle de l’œil, fais-nous un signe de bonté à la louange et à la gloire de ton saint nom. C’est pour ta gloire que s’accomplit l’incessante glorification de tous les êtres, maintenant et toujours, dans les hauteurs du Père, du Fils et de ton Esprit Saint, dans l’éternité de l’éternité. Amen!

ՆՈՒԻՐԱՏՈՒՈՒԹԻՒՆ ԵԿԵՂԵՑԻՈՅ

Don à l'Église

Donation for the Church

CHURCH:

Mr. Ara Zafirian $100, Mrs. Sonya Djandjikian $50, Mrs. Maro Markarian $30, Mrs. Hilda Eramian $20

IN LIEU OF FLOWERS DONATIONS MADE:

THE LATE ARMENAG OULOUSIAN:

Mr. & Mrs. Haig Kanar, Mr. & Mrs. Krikor & Armine Kanar, Mrs. Bayzar Kanar $500, Mrs. Elizabeth Adjeleian $400, Mr. & Mrs. Alex & Nora Kunter, Mr. Habib Malo $100, Mr. Joseph Toutikian, Mr. & Mrs. Emile & Sella Kutlu, Mr. & Mrs. Vahakn & Lucy Arapyan, Mrs. Rochelle Reyes, Mr. & Mrs. Murat & Zivart Takvorian, Mrs. Hilda Hacikyaner, Mr. & Mrs Michel & Sella Kutlu, Mrs. Anne Soukiassian, Mr. & Mrs. Avedis & Mari Basmacioglu $50, Mr. & Mrs. Murat & Nadia Armutlu $40, Mr. Levon Simonyan, Mr. & Mrs. Nuran Cankul, Mr. & Mrs. Arsen & Ayda Unlusoy, Mrs. Aghavni Koleoglu, Mrs. Germaine Koleoglu $30, Mrs. Seta Artokun $25, Mrs. Anita Kebabjian, Mr. Frengul Kalaitzian, Mr. Aram Der Movsesyan, Mr. Vahan Sekeryan $20

THE LATE MISAK LEVON BALIAN:

Mrs. Sonia Kalpakdjian $50

HOKEHANKISD:

THE LATE HAIG MISAKYAN:

Mr. Jirayr Gazeryan $100, Mr. & Mrs. Ara Gerikyan, Mr. & Mrs. Krikor & Armine Kanar, Mr. & Mrs. Krikor & Irma Merekyan, Dr. Arto Demirjian, Mr. Levon Simonyan, Mr. & Mrs. Murat & Zivart Takvorian, Mr. & Mrs. Mihran & Yercanik Ecityan $50, Mrs. Vartouhi Torossian, Mrs. Germaine Koleoglu, Mrs. Hilda Kepekci, Mr. & Mrs. Avedis & Mari Basmacioglu $30

THE LATE TAKVORIAN & CANKUL FAMILIES:

Mr. & Mrs. Ara Gerikyan $50

THE LATE IMASDUHI NIGOGOSSIAN:

Mr. Vrej Nigogossian $100, Mr. & Mrs. Mihran & Yercanik Ecityan $50, Mr. Frengul Kalaitzian $20

THE LATE TAKUHI SEPOYAN SEVGEN:

Mr. & Mrs. Arman & Ani Sevgen $100

THE LATE ANNA DEGIRMENTAS:

Mr. Melkon Degirmentas $50

ԽՈՐՀՈՒՐԴ ՀՈԳԵՀԱՆԳՍՏԵԱՆ ՊԱՇՏՕՆԻ

Այն հաւատացեալները, որոնք իրենց հանգուցեալ սիրելիին կամ հարազատին համար ՀՈԳԵՀԱՆԳԻՍՏ կը խնդրեն, պէտք է նկատի ունենալ թէ անհրաժեշտ է Սուրբ Պատարագի սկիզբէն ներկայ գտնուիլ եկեղեցի եւ մասնակցիլ աղօթքներուն. վասն զի, Սուրբ Պատարագի վերջաւորութեան կատարուելիք Հոգեհանգստեան Պաշտօնէն զատ, Պատարագիչ քահանան իր լուռ աղօթքներուն մէջ եւս կը յիշէ մեր բոլոր ննջեցեալներն ու յատկապէս անոնք՝ որոնց համար խնդրանք մատուցուած է:

CONSEIL POUR LES MESSES DE REQUIEM

Nous informons les personnes qui désirent faire un REQUIEM à l'intention de leur chers disparus, qu'elles doivent être présentes à l'église dès le début de la Sainte Messe puisque le père évoque le nom des défunts dans ses prières cachées pendant la Sainte Messe. Il est même préférable de donner le nom des défunts la veille en prévenant l'Église ou en contactant le Père.

ՑԱՒԱԿՑԱԳԻՐ

Ս. Գրիգոր Լուսաւորիչ
Առաջնորդանիստ Մայր Եկեղեցւոյ
Հոգեւոր Հովիւն ու Ծխական Խորհուրդը
Ողբացեալներ՝

ԱՐՄԵՆԱԿ ՈՒԼՈՒՍԵԱՆԻ
(ARMENAG OULOUSIAN)
ՄԻՍԱՔ ԼԵՒՈՆ ՊԱԼԵԱՆԻ
(MISAK LEVON BALIAN)

Մահուան տխուր առիթներով
Իրենց խորին ցաւակցութիւնները կը յայտնեն
հանգուցեալներու բոլոր պարագաներուն,
աղօթելով առ Աստուած, որ անոնց հոգիները
Երկնային Արքայութեան արժանանան:

ՀՈԳԵՀԱՆԳՍՏԵԱՆ ԿԱՐԳ

SERVICE POUR LE REPOS DE L'ÂME

SERVICE FOR THE REPOSE OF SOUL

ԿԻՐԱԿԻ, 24 Մարտ 2019

Պր. Յակոբ Շիրինեանի,
խնդրանքով հոգեհանգստեան պաշտօնպիտի կատարուի
իր սիրեցեալ կնոջ՝

ԹԱԳՈՒՀԻ ՇԻՐԻՆԵԱՆԻ (TAKUHI SIRINYAN)

մահուան առաջին տարելիցին առիթով,
սուրճի սպասարկութիւն *Ծխական Խորհուրդի* սենեակին մէջ:

Տ. եւ Տիկ. Նորայր եւ Էտիթա Ղարիպեանի եւ զաւակներուն,
Տ. եւ Տիկ. Ֆիլիփ եւ Նատին Պայարի եւ զաւակներուն,
խնդրանքով հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի
իրենց սիրեցեալ հօր եւ մեծ հօր՝

ԱԼՊԷՐ ՂԱՐԻՊԵԱՆԻ (ALBERT GHARIBIAN)

մահուան առաջին տարելիցին առիթով:

Տօքթ. եւ Տիկ. Գէորգ Մաճունեանի եւ ընտանիքին (Գահիրէ),
Տ. եւ Տիկ.Փիյէր եւ Ալիս Մաճունեանի եւ ընտանիքին,
Տիկ. Ժորժէթ Մանիքեանի եւ ընտանիքին,
Տ.եւ Տիկ.Յովսէփ եւ Մարի Տօղրամաճեանի եւ ընտանիքին,
խնդրանքով հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի
իրենց սիրեցեալ եղբօր, հօրեղբօր եւ մօրեղբօր՝

ՅԱԿՈԲ ՄԱՃՈՒՆԵԱՆԻ (HAGOP MATZOUNIAN)

մահուան 25-րդ տարելիցին առիթով,
ինչպէս նաեւ՝

ՄԱՃՈՒՆԵԱՆ ԵՒ ՏՕՂՐԱՄԱՃԵԱՆ
(MATZOUNIAN & DOGHRAMADJIAN)

Գերդաստաններու համայն ննջեցելոց
հոգիներուն ի հանգիստ:

«ՈՂՋՈՅՆ»-Ի ԲԱՆԱՁԵՒԵՐ
SALUT DE PAIX

Յարգելի հաւատացեալներ,
Սուրբ Պատարագի ընթացքին «Սուրբ Ողջոյն» կը փոխանակենք:
Այդ առթիւ, «Ողջոյն» տուողը պէտք է ըսէ.-
Pendant la Sainte Liturgie, on échange le baiser de la paix.
Celui qui salue dit:

1) Յունուարի 5-էն մինչեւ 13-ը:
Du 5 au 13 Janvier
Ծնունդի ութ օրերուն.-
«ՔՐԻՍՏՈՍ ԾՆԱՒ ԵՒ ՅԱՅՏՆԵՑԱՒ»
«Le Christ est né et s'est révélé»

2) Զատիկէն մինչեւ Համբարձում.-
À partir de Pâques jusqu'à l'Ascension.-
«ՔՐԻՍՏՈՍ ՅԱՐԵԱՒ Ի ՄԵՌԵԼՈՑ»
«Le Christ est ressuscité d'entre les morts»

3) Միւս օրերուն.-
Les autres jours.-
«ՔՐԻՍՏՈՍ Ի ՄԷՋ ՄԵՐ ՅԱՅՏՆԵՑԱՒ»
«Le Christ s'est révélé parmi nous»

«Ողջոյն» ստացողը պէտք է պատասխանէ .-
Celui qui reçoit le salut réponds:

1- Ծնունդի ութ օրերուն.-
«ՕՐՀՆԵԱԼ Է ԾՆՈՒՆԴՆ ՔՐԻՍՏՈՍԻ»
«Soit bénie la Naissance du Christ»

2- Զատիկէն մինչեւ Համբարձում.-
«ՕՐՀՆԵԱԼ Է ՅԱՐՈՒԹԻՒՆՆ ՔՐԻՍՏՈՍԻ»
«Soit bénie la Résurrection du Christ»

3- Միւս օրերուն.-
«ՕՐՀՆԵԱԼ Է ՅԱՅՏՆՈՒԹԻՒՆՆ ՔՐԻՍՏՈՍԻ»
«Soit bénie la Révélation du Christ»

ՆԻՍՏ ՈՒ ԿԱՑ ԵԿԵՂԵՑԻԻՆ ՄԷՋ

Ամենուն յատուկ ուշադրութեան եւ նկատառութեան կը հըրաւիրենք հետեւեալ պարագաները.

1. Հաւատացեալները պարտին խոստովանիլ՝ Ս. Հաղորդութիւն ստանալէ առաջ:
2. Կանայք երբ հաղորդուելու կը մերձենան, անհրաժեշտ է որ իրենց գլուխը ծածկեն քողով կամ գլխարկով:
3. Երբ Եկեղեցի կ'երթանք մասնակցելու Ս. Պատարագին կամ այլ արարողութիւններու, պարտինք վայելուչ եւ լուրջ զգեստներ հագուիլ, ուշադիր ըլլալ մեր նիստ ու կացին, զգուշանալ ողջագուրումներէ եւ իրարու հետ խօսակցելէ:
4. Երբ Եկեղեցին ենք ու կը սպասենք մասնակցելու արարողութեան մը կամ արարողութեան աւարտին ենք եւ կը պատրաստուինք դուրս գալ Եկեղեցիէն, պէտք է խուսափիլ աղմկելէ կամ իրար հետ խօսակցելէ : Եկեղեցին ա-ղօթքի Սուրբ վայր է: Այնտեղ՝ շարունակ եւ միշտ ԼՌՈՒԹԻՒՆ եւ ԽԱՂԱՂՈՒԹԻՒՆ պէտք է տիրէ:

OBSERVANCES PARTICULIÈRES À RESPECTER

Nous attirons tout particulièrement Votre attention sur les points suivants:

1) Les fidèles doivent se confesser avant de recevoir la Sainte Communion.
2) Les femmes doivent avoir la tête couverte pour communier.
3) Chaque fois que nous entrons dans l'Eglise pour assister à une cérémonie religieuse, nous devons être attentifs à la dignité de notre tenue, à la célébration en cours et éviter de saluer ostensiblement nos proches ou nos amis dans ce lieu saint.
4) Il est rappelé que l'Eglise est un lieu Saint où doivent toujours régner le calme et la sérénité.

Il est instamment demandé aux fidèles qui désirent se saluer, avant ou après les cérémonies, de le faire à l'extérieur de ce lieu de prières.

Website: ***www.saintgregory.ca***

Սիրելի հաւատացեալներ,
Հաճոյքով կը տեղեկացնենք Ձեզի,
թէ յետայսու կարելի է այցելել Եկեղեցւոյ
Կայքէջը - Website www.saintgregory.ca
Ուր կարելի է գտնել Եկեղեցւոյ յայտարարութիւնները
եւ ձեռնարկները:
Կատարել Ձեր սրտաբուխ նուիրատուութիւնները
եւ օգտուիլ ընձեռուած այլ կարելիութիւններէն
համացանցային դրութեամբ:
Շնորհակալութիւն Ձեր աջակցութեան համար:

Chers Paroissiens,
Nous avons le plaisir de vous informer
de la récente mise à jour de notre
Site: *www.saintgregory.ca*
Ou vous trouvez les dernières nouvelles des activités
et des événements.
Nous remercions de votre soutien!

Dear Parishioners,
We are glad to inform you our Church's newly developed
Website: www.saintgregory.ca
where you will read the latest church news and events,
meanwhile you can also make your online church donations
and benefiting from other possibilities of our Website.
Thank you for your support!

Ուշադրութիւն Մեր Սիրելի Հաւատացեալներուն

Եթէ ունիք հասցէի, հեռաձայնի կամ e-mail-ի փոփոխութիւն, հաճեցէք ձեր նոր տուեալները փոխանցել Եկեղեցւոյ քարտուղարութեան (514) 279-3066, մեր հաղորդակցութիւնը կարենալ պահելու համար կանոնաւոր, շարունակական եւ այժմէական ընթացքի մէջ:
Շնորհակալութիւն ձեր գործակցութեան համար:

Ծխական Խորհուրդ

Attention to our beloved parishioners

If you have changes in your address, e-mail or phone numbers please feel free to convey your new data to the Church office at (514) 279-3066, to maintain our communication in a regular, continuous, and up-to-date course.

Thank you for your cooperation.

ՀՍԿՈՒՄԻ ՀՈԳԵՊԱՐԱՐ ԱՐԱՐՈՂՈՒԹԻՒՆՆԵՐ

Ամէն Չորեքշաբթի երեկոյեան ժամը 7:00-ին

Մարտ 6 – Ապրիլ 18

2019

Մարտ 6 – Քարոզիչ՝ Հոգշ. Հայր Վարդան Վրդ. Թաշճեան

Պահոց Ընթրիք – Տ. եւ Տիկ. Ասպետ եւ Միրնա Պաճաքեան

Մարտ 13 – Քարոզիչ՝ Արժ. Տ. Տրդատ Քհնյ. Թաշճեան

Պահոց Ընթրիք – Թէքէեան Մշակութային Միութիւն

Մարտ 20 – Քարոզիչ՝ Արժ. Տ. Կոմիտաս Քհնյ. Միրզախանեան

Հոգեւոր Հովիւ- Լաւալի Ս. Խաչ Հայց. Առաք Եկեղեցւոյ

Պահոց Ընթրիք – Տիկ. Սօնիա Գալայճեան եւ Ընտանիք

Մարտ 27 – Քարոզիչ՝ Գերշ. Տ. Աբգար Եպս. Յովակիմեան

Առաջնորդ Գանատահայոց Թեմի

Պահոց Ընթրիք – Փառանձեմ Գէորգեան, Թամար եւ Շողիկ Գրիգորեան

Ապրիլ 3 – Քարոզիչ՝ Գերյ. Հ. Գէորգ Ծ. Վրդ. Ձապարեան

Ժողովրդապետ Հայ Կաթողիկէ Համայնքի

Պահոց Ընթրիք – Տիկ. Ռոզ Տիգրանեան

Ապրիլ 10 – Քարոզիչ՝ Պատուելի Յովհաննէս Սվաճեան

Հոգեւոր Հովիւ - Հայ Աւետարանական Եկեղեցւոյ

Պահոց Ընթրիք – Տիկ. Թագուհի Օտապաշեան եւ Ընտանիք

Ապրիլ 18 – Աւագ Հինգշաբթի

Աւագ Հինգշաբթի Ընթրիք – Տիկնանց Յանձնախումբ «Մարի Մանուկեան» սրահին մէջ

615 Stuart Ave., Outremont, QC H2V 3H2 / Tel.: (514) 279-3066 / Fax: (514) 279-8008 / stgregorychurch@gmail.com

ՍԲ. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՒՈՐԻՉ
ԱՌԱՋՆՈՐԴԱՆԻՍ
ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑԻ

ՄԻՋԻՆՔ

Կազմակերպութեամբ՝
Տիկնանց Յանձնախումբին

Շաբաթ, 30 Մարտ 2019

Արեւագալի ժամերգութիւն
առաւօտեան ժամը 11-ին:

ՃԱՇԿԵՐՈՅԹ ԵՒ
ԳԵՂԱՐՈՒԵՍՏԱԿԱՆ ՅԱՅՏԱԳԻՐ

Մասնակցութեամբ՝ **ՄԱՐԹԷՆ ԵՕՐԿԱՆՅԻ**
եւ կիթառահար՝ ԱՐՄԱՆ ԱԲՐԱՀԱՄԵԱՆԻ
ԵՒ
Առ ի գնահատանք Տիկնանց Յանձնախումբին՝
Բանախօսութիւն
Նիւթ՝
«Կինը եւ Եկեղեցին»
Եկեղեցւոյ Մարի Մանուկեան սրահին մէջ:

Մուտքի նուէր՝$20

615 Stuart Avenue, Outremont Quebec, Canada H2V 3H2
secretary@saintgregory.ca | www.saintgregory.ca

ՍԿԶԲՈՒՆՔ ԼՈՒՍԱՒՈՐԻՉ
ՄԱՅՐ ՏԱՃԱՐ

ՀԱՅՑ. ԱՌԱՔ. ՍԲ. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՒՈՐԻՉ ԱՌԱՋՆՈՐԴԱՆԻՍՏ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑԻ

ԾԱՂԿԱԶԱՐԴ
ԵՒ
ՄԱՆՈՒԿՆԵՐՈՒ ՕՐՀՆՈՒԹԵԱՆ ՕՐ

ԿԻՐԱԿԻ, 14 ԱՊՐԻԼ 2019

Առաւօտեան ժամերգութիւն՝ ժամը 9:30
Սբ. Պատարագ՝ ժամը 10:30

Յաւարտ Սբ. Պատարագի պիտի կատարուի
Մանուկներու Օրհնութեան կարգ

Դռնբացէք՝ ժամը 12:30

ԱՒԱՆԴԱԿԱՆ ՃԱՇԿԵՐՈՅԹ

Հիւրընկալութեամբ՝
«ԿԱՄԱՐ» Երիտասարդական Միութեան
«Մարի Մանուկեան» սրահին մէջ:

Մուտքի նուէր $ 20

615 Stuart Ave., Outremont, QC H2V 3H2
Tel.: (514) 279-3066 / Fax: (514) 279-8008
stgregorychurch@gmail.com

ԵԿԷ՛Ք ՊԱՅԾԱՌԱՅՆԵՆՔ ՄԵՐ ԵԿԵՂԵՑԻՆ



Եկեղեցոյս պայծառութեան եւ առաքելութեան յարատեւման նախանձախնդիր մեր սիրելի հաւատացեալներ,

Սիրով կը յայտնենք, թէ մեր եկեղեցին կարիքն ունի հետեւեալ իրերուն.-

- Օդորակիչի անհրաժեշտ սարքաւորման (Air Conditioner)
- Ս. Սեղանի ոսկեգոյն ասեղնագործ ծածկոց
- Հոգեւորականաց հողաթափեր
- Սկիհի ծածկոցներ եւ Աւետարանի բռնիչ
- Շուրջառներ
- Մեծ Պահքի կամ Աւագ շաբթուան յարդարանք (սեղան եւ ծածկոց)
- Յիսուս Մանկան մսուր
- Եկեղեցւոյ տօնածառ
- Ճրագալոյցի եւ Տեառընդառաջի համար նախատեսուած դուրսի մոմեր
- Ջրօրհնէքի Սափոր
- Ս. Խորանի 2 մեծ վարագոյր կարմիր եւ սեւ

Արդ, անոնք որոնք կը փափաքին իրենց սրտաբուխ նուիրատուութեամբ մասնակից դառնալ եկեղեցւոյ սուրբ առաքելութեան, հաճին կապ պահել եկեղեցւոյ հովիւին կամ քարտուղարութեան հետ (514) 279- 3066:

«*Այս երկրի մէջ ցանէ՛ քու հացդ, որպէսզի երկնքի մէջ զայն հարիւրով պտուղ տուած գտնես*»:

«Հոգեւոր հայելի»

Կանխայայտ շնորհակալութեամբ,

Հոգեւոր Հովիւ եւ Ծխական Խորհուրդ

ԵԿԷ՛Ք ՊԱՅԾԱՌԱՑՆԵՆՔ ՄԵՐ ԵԿԵՂԵՑԻՆ

Սիրելի հաւատացեալներ,

Եկեղեցւոյ Սուրբ Սեղանը, որ պատարագեալ Փրկիչի իջեւանն է, ամէն Կիրակի եւ յատկապէս տաղաւար տօներուն զեղեցիկ եւ պայծառ պահելու համար կոչ կ՚ուղղենք Ձեզի, որ Ձեր գործօն եւ արդիւնաւէտ մասնակցութեամբ կամ ծաղիկներով զարդարել Տիրոջ Ս. Սեղանը, զոր աղբիւրն է Կենաց եւ Իմաստութեան:

Արդ, անոնք որոնք կը փափաքին իրենց սրտաբուխ նուիրատուութեամբ կամ ծաղիկներու մատուցմամբ զարդարուն պահեն Տիրոջ Ս. Խորանը, կրնան կապ պահել եկեղեցւոյ քարտուղարութեան հետ (514) 279- 3066:

Հովիւ
եւ
Ծխական Խորհուրդ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Ս. Գրիգոր Լուսաւորիչ Առաջնորդանիստ Մայր Եկեղեցւոյ հովանու ներքոյ գործող Կիրակնօրեայ Վարժարանը, ներշնչուելով նոր սերունդի հայեցի դաստիարակութեան անհրաժեշտութենէն՝ անմիջական կարիքն ունի Արեւելահայերէն եւ Արեւմտահայերէն լեզուներ դասաւանդող մասնագէտներու, սիրայօժար սկզբունքով:

- Դասընթացքները պիտի կատարուին Կիրակի օրերը ժամը 11-էն սկսեալ:
- Հետաքրքրուողներէն կը խնդրենք դիմել Եկեղեցւոյ գրասենեակ՝ (514) 279-3066 թիւին:

կամ

- Արեւմտահայերէնի պատասխանատու՝ Շողիկ Գուշաքճրեանին (514) 690-2890:
  Արեւելահայերէնի պատասխանատու՝ Ալինա Պէժանեանին (438) 889-8167:

Հոգեւոր Հովիւ
եւ
Մխ. Խորհուրդ

Ս. Գրիգոր Լուսաւորիչ Առաջնորդանիստ
Մայր Եկեղեցի
St. Gregory the Illuminator Armenian Cathedral

ԿԻՐԱԿՆՕՐԵԱՅ ՎԱՐԺԱՐԱՆ

6 -14 տարեկան երեխաներու համար

École de dimanche

Pour les enfants de 6 à 14 ans

Հաճելի եւ ընկերային մթնոլորտ

- Սաղմոսներ եւ երգեր
- Հայերէն լեզու
- Հաճելի Պատմուածքներ եւ անակնկալներ
- Զուարճալի եւ հետաքրքրաշարժ յաջորդական պտոյտներ

Կիրակնօրեայ Վարժարանը տեղի կ'ունենայ ամէն Կիրակի առաւօտեան ժամը 11-ին:

Արձանագրութեան եւ մանրամասնութեան համար հեռաձայնել՝ Եկեղեցւոյ

գրասենեակ (514) 279–3066

Տէր Դաւիթ Քհնյ. Մարգարեան

École de dimanche
Pour les enfants de 6 à 14 ans
Dans une ambiance chaleureuse et amicale on Offre aux enfants :

- Initiation aux Psaumes et chants
- Connaissance de la langue arménienne
- Histoires instructives et divertissements
- Sorties récréatives et successives

Chaque dimanche à 11 heures

Pour plus amples informations et inscription
Contacter le secrétariat de l'Église (514) 279-3066
Père David Margaryan

615 Stuart Ave., Outremont, QC H2V 3H2 / Tel.: (514) 279-3066 / Fax: (514) 279-8008
E-Mail: stgregorychurch@gmail.com, *www.saintgregory.ca*
Facebook : Saint Gregory Armenian Apostolic Church of Montreal

ՍԿԶԲՆԱԿՈՐ ԼՈՒՍԱՒՈՐԻՉ
ՄԱՅՐ ՏԱՃԱՐ

Հայց. Առաքելական
Ս. Գրիգոր Լուսաւորիչ
Առաջնորդանիստ Մայր Եկեղեցի

Դաշնակի Դասընթացքներ

Փոքրերու եւ չափասներու համար
Սկզբնակներու եւ երաժշտութեան հետեւողներու համար
Անհատական դասընթացքներ պիտի կատարուին՝
Ամէն Կիրակի ժամը 11-էն սկսեալ ,
արհեստավարժ եւ փորձառու դաշնակահարուհի՝
ԶԻՆԱՅՏԱ ՎԱՐՈՍԵԱՆԻ հետ:
Շրջանաւարտ երաժշտագէտ McGill համալսարանէն
եւ արժանացած Քէպէքի Ոսկեայ Մետալին
Երաժշտական ծիրէն ներս:

Յաւելեալ մանրամասնութիւններու համար
կապ հաստատել Եկեղեցւոյ գրասենեակ՝
հեռ. (514) 279-3066 / stgregorychurch@gmailcom
կամ ուսուցչուհի՝ Զինայտա Վարոսեանի հետ
հեռ. (514) 945-586 zinaida.varosian@mcgill.ca

Piano lessons with a concert pianist

All ages – Children / Adults
For beginners & Music trainees
Individual courses will be held every Sunday at 11:00 am

Many years of experience
Theory & harmony
Preparation for Examen and competitions.
Master of Music in Performance from Mc Gill University
Quebec Gold Medalist

For further information
contact to the church office
at (514) 279-3066 / stgregorychurch@gmail.com
or Teacher- Zinaida Varosian
at (514)945- 5816 / zinaida.varosian@mcgill.ca

615 Stuart Ave., Outremont, QC H2V 3H2

Ս. Գրիգոր Լուսաւորիչ
Պատանեկան Երաժշտական Խումբ

Jeunesse
Musicale St-Grégoire d'Outremont

Պատանեկան Երգչախումբի փորձերը տեղի կ'ունենան
Կիրակի օրերը կէսօրէ ետք, ժամը 1:30-ին:

Les répétions de la chorale des Jeunes ont lieu
Les dimanches à 13:30 heures

Յաւելեալ մանրամասնութեանց համար կապ հաստատել Եկեղեցւոյ քարտուղարութեան հետ:

Pour en savoir plus, veuillez contacter le secrétariat de l'église.

Արձանագրութեան տարիք 7-15 տարեկան

Âge d'inscription 7 à 15 ans

- Փոքրերը հնարաւորութիւն պիտի ունենան սորվելու հիմնական երաժշտութեան նոթաները, միաժամանակ պիտի մշակուին անոնց երաժշտական գիտելիքներն ու ճաշակը:
- Durant les rencontres hebdomadaires, les enfants auront l'opportunité d'apprendre les bases de la notation musicale et le solfège.
- Ուսումնասիրուած ծրագիրը պիտի բաղկանայ ժամանակակից, դասական եւ կրօնական երաժշտական կտորներէ, Ֆրանսերէն եւ Հայերէն լեզուներով:

- Le répertoire étudié consistera de pièces musicales contemporaines, classiques et religieuses, de langue française et arménienne.

Հոգեւոր Հովիւ եւ Ծխական Խորհուրդ
Curé & Conseil Paroissial

615 Stuart Avenue, Outremont, QC H2V 3H2 / Tel.: (514) 279-3066/
Fax: (514)279-8008/ stgregorychurch@gmail.com
Facebook: Saint Gregory Armenian Apostolic Church of Montreal

la collecte

blood donor clinic

16e ÉDITION

LA COLLECTIVITÉ ARMÉNIENNE

Diocèse Canadien de la Sainte Église Apostolique Arménienne

Armenian Holy Apostolic Church Canadian Diocese

Հայաստանեայց Առաքելական Սուրբ Եկեղեցւոյ Գանատահայոց Թեմ

Samedi 27 avril 10 h à 17 h	Saturday, April 27 10 a.m. to 5 p.m.

globule
CENTRE DES DONNEURS DE SANG

Centre Laval
1600, boul. Le Corbusier
Entrée porte # 4

HÉMA-QUÉBEC
Au-delà du sang!

GIVE BLOOD. GIVE LIFE.

DONNEZ DU SANG. DONNEZ LA VIE.

ԱՐԱՐԱՏ ՃԱՄԲԱՐ 2019

ՇԱԲԱԹ, Օգոստոս 10--Օգոստոս 17, 2019

Մասնակցիր շաբթուայ մը բացօդեայ ճամբարին, ուր ինքզինքդ պիտի զգաս Հայկական մթնոլորտի մէջ եւ ուր պիտի հաստատես երկարատեւ բարակամութիւններ եւ ուրկէ ակամայ պիտի բաժնուիս անմոռանալի

Դիմումագիրերը կարելի է հայթայթել www.campararat.ca կայքէջէն:
Հաճեցէք դիմումագիրերը ղրկել եւ վճարումները կատարել մինչեւ Ապրիլ 1, 2019
Իւրաքանչիւր մասնակցողի համար վճարել $555.00:
Տեղերը սահմանափակ են, հաճեցէք ձեր դիմումը չուշացնել

Յաւելեալ տեղեկութեան համար հաճեցէք մեզ հետ կապ հաստատել campararat@gmail.com հասցէով, կամ հեռաձայնել Անի Ալթունեանին 905-891-8216, կամ դիմել ձեր ծուխի Հոգեւոր Հովիւին եւ Ծիսական Խորհուրդին

Արարատ ճամբարին առաքելութիւնն է Գանատահայ երիտասարդին տրամադրել այնպիսի զուարթ, ապահով եւ դաստիարակչական միջավայր մը, ուր ան փորձառական հմտութիւնը ունենայ Քրիստոնէական հաւանքին, իր Հայկական պատկանելիութեան, ինչպէս նաեւ կատարելագործէ իր ընկերութեան, Եկեղեցիին ու համայնքին օգնելու յատկութիւնները:

ՊՏՈՅՏ ԴԷՊԻ ԹՈՒՐՔԻՈՅ ՄԷՋ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԱՏՄԱԿԱՆ ՎԱՅՐԵՐ

TRIP TO THE ARMENIAN HERITAGE SITES IN TURKEY

MAY 7, 2019 MAY 20, 2019



The Women's Guild Central Council,
with the blessings of
H.G. Bishop Abgar Hovakimyan,
Primate of the Armenian Diocese of Canada,
organizes a

TRIP TO THE ARMENIAN HERITAGE SITES IN TURKEY

(Istanbul, Rodosto (Tekirdag), Bursa, Efes, Cappadocia, Kayseri, Adana, Musa Dag).

Cost $2,200 USD (double occupancy)
$2,600 USD (single occupancy)
Included: 13 nights accommodation at nice hotels, Breakfasts & dinners, professional guides (Armenian & English), Bosphorus by boat, transportation with high end buses, domestic flight.



Not included: international airfare, lunches, drinks, balloon tour in Cappadocia.

Places are limited !
Deposit $500 by March 7.
Full payment by March 31.

For details, please contact the Diocese at (514) 276-9479 or contact@armenianchurch.ca, or
WGCC Chair, Mrs. Anita Ohanessian at (647) 984-8568 or anita-ot@hotmail.com, or
Mrs. Ayda Afarian at (416) 885-0303 or aydaafarian@gmail.com

Հայց. Առաքելական
Ս. Գրիգոր Լուսաւորիչ
Առաջնորդանիստ Մայր Եկեղեցի

Եթէ ունիք հասցէի փոփոխութիւն,
հաճեցէք ձեր նոր տուեալները փոխանցել
Եկեղեցւոյ քարտուղարութեան:

Vous avez déménagé cette année?
S'il-vous-plaît, veuillez nous informer
de votre nouvelle adresse.

Have you moved this year?
Please do not forget to inform us of
your new address.

615 Stuart Ave., Outremont, QC H2V 3H2
Tel.: (514) 279-3066 / Fax: (514) 279-8008
stgregorychurch@gmail.com

ՀԱՅՑ. ԱՌԱՔ.Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՒՈՐԻՉ ԱՌԱՋՆՈՐԴԱՆԻՍՏ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑԻ

CATHÉDRALE ARMÉNIENNE ST-GRÉGOIRE L'ILLUMINATEUR

ST. GREGORY THE ILLUMINATOR ARMENIAN CATHEDRAL

615 Stuart Ave., Outremont, QC H2V 3H2 / Tel.: (514) 279-3066 / Fax: (514) 279-8008 / stgregorychurch@gmail.com

ԻՆՔՆԱՇԱՐԺԵՐՈՒ ԿԱՅԱՆԱՏԵՂԻ

Սիրելի հաւատացեալներ,
հաճոյքով կը տեղեկացնենք, թէ յետայսու, ամէն Կիրակի,
ձեր ինքնաշարժերը կրնաք կանգնեցնել
Bernard փողոցին վրայ գտնուող
«Centre d'Éducation des Adultes Outremont» դպրոցի
կայանատեղիին (parking) մէջ,
սկսեալ առաւօտեան ժամը 10-էն մինչեւ կ.ե. ժամը 3:

PARKING

Dear parishioners, we would like to inform you that every Sunday you will be able to park your cars at the parking of the school Centre d'Éducation des Adultes Outremont on Bernard Street, from 10:00 am – 3:00 pm

- From our Church turn right on Bernard stret, go 1 block.
- Turn left on Dollard Blvd. all the way to the 'Centre d'Éducation des Adultes Outremont. The parking space is on your right

Adress : 500 Boulevard Dollard, Outremont, QC H2V 3G2